

քննական հեղինակաւորութիւն, և երբեմն գործադրում է այն ժամերգութեան ժամանակ:

Բայց նոյն իսկ միաբնակներն էլ բոլորովին չհրաժարուեցին Պեշիտտայից. նեստորականները անդրդուելի կերպով յարած մնացին նրան: Բաց յայսմանէ, ինչպէս նկատել եմ վերեւ, Ե. դարի վերջին կէսից մինչև տպագրութեան գիւտը Պեշիտտայի եղած ձեռագրերից երկար շարքեր վկայութիւն ունենը: Դրանք բոլորն էլ ըստ էութեան մի և նոյն տեսակի բնագիրն ունեն:

Ռուս. քաղ. Յուսիկ Արքեպ.

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ.

(Գրուած Վերին-Ազուլեցի Ս'ելքոն Փանեանցին).

33.

Թիֆլիզ, 18-ին նոյեմբերի 1870.

Իմ ազնիւ, եղբայրապատիւ բարեկամ,

Ձեր յարգելի նամակը ամսուս 3 թուականից հասաւ ինձ իւր ժամանակին, որոյ մէջ յայտնուէք ինձ մի անկարգութեան անցք, որ ես վաղուց գուշակուէի, միտ դնելով այն բանին, որ քաղաքից քաղաք և այն, բանքի ձեռամբ արծաթ հասուցանել, միշտ դժուարին բան է. Դուք մեղաւոր չէք, այլ իմ եղբայրը պարտական էր Ձեզ չորհակալ լինել, որ Դուք աշխատութիւն էիք յանձն առած աւելորդ ծախքով արծաթ ուղարկել նմա. եթէ դա իւր ժամանակին հասած չէ նամակատան սպասաւորի անհոգութեամբ, այդ արդարև յաւելի է. բայց ի՛նչ, Ձեր պատասխանատուութեան ներքոյ ինչորեւ մամենին միասիտ լինել Ձեր տոկոսիքի հատուցման մասին սկսեալ փոխանակագրի ամսաթուից, իմ եղբայրը չունի համարձակութիւն ալլապէս վարուիլ, քան թէ ամենին համաձայն է իմ կամքին և խորհրդակցութեանը:

Ամսուս 4 թուականից ստացայ պ. Քանանեանից մի նամակ, ինչպէս նա խղատացած էր Ձեզ գրել ինձ, նա կրկնած էր ինձ նոյն պայմանքը պրոֆեսսորական պաշտօնի, որ արդէն յառաջուց յայտնի էին ինձ, յաւելացնելով միայն, որ այդ պայմանքը ժամանակով կը փոխարկուին դէպի լաւագոյնը և առաւել չահաւէտը, և բարեկամաբար խորհրդակցելով ինձ և յուսացուցանելով զիս, որ յանձն առնում այդ պաշտօնը ես արդէն վճռաբար պատասխանեցի նմա, որ ընդունում եմ նորա առաջարկութիւնը և յանձնում եմ այս գործի կարգադրութիւնը նորա խոհական, բարեկամական հոգաբարձութեանը:

Միտ գնելով իմ գրեանքի և տնտեսական անօթների վերստին տեղափոխութեան հաջորդ ծախքին, մանաւանդ թէ այսպիսի հեռաւոր ճանապարհի մէջ, Թիֆլիզից դէպ ի Մոսկուայ եւ խնդրեցի պ. Վանանովից, որ այս դժուարութիւնը հոգայ փոքր ի շատե թեթեւացնել ինձ. իսկ իմ յատուկ անձնական ճանապարհորդութեան ծախքը եւ կառնուի իմ վերայ, որպէս և իցէ տնտեսութիւն գործելով իմ այժմեան ծախքերի մէջ: Եթէ կամենար պ. Հոգաբարձուն և պ. Դիրեկտորը, նոցա և ինստիտուտի համար մի մեծ ծախք չէր 5—600 ման, ապա թէ ոչ, իմ տեղափոխութիւնս կը նստէր ինձ մինչև 1000 ման. զրեթէ իմ տարեկան ստանալի թոշակս պրօֆեսսորական պաշտօնի եւ գալով մի ամբամ Մոսկուա, նրբան ծախքեր պիտի դնու ևս մնային ինձ առնելու, վասն նոր ի նորոյ կարգադրելու այն տեղ իմ տնտեսական պիտոյքը: Մի կատարեալ աւերումն. ունեցածը ջուրը ձգել և ապա վերստին հոգալ. տնից տուն փոխադրուիլ, կործանումն է արդէն, բայց քաղաքից քաղաք տասնապատիկ ցաւելի և անտանելի մտածութիւն:

Բայց ինչ պիտոյ է առնել, քանի որ կենդանի ենք տիտի պատերազմներ զժուարութիւնների հետ. միայն թէ իմ պատերազմներս, իմ ազնուամիտ հայրենասիրութեան պատճառով, վրդովումն արդէն իմ կեանքի բոլոր խաղաղութիւնը. ամենեքեան հանդիստ որսնեցին և գտան, բայց եւ իմ ազնուամտութեամբս մոլորուելով և սխալուած, պատրաստեցի ինձ միանգամայն նեղութիւնք և տառապանք, վիշտ և սրտցաւութիւնք, ամենայն տեսակ զրկանք. Արդարեւ ճշխացաւ իմ կեանքս մի քանի փորձերով, տեսայ և լսեցի Ասիայում բաներ, որ չգիտէի տակաւին. բայց ցաւելին այն է, որ դոքա մխիթարական բաներ չեն, այլ յուսահատեցուցիչ միանգամայն. Զէ կարելի ասել, որ Թիֆլիզը ամենին զուրկ է առաքինի մարդերից և գործերից, բայց ազգը սպառուած է. հասարակութիւն չկայ, կան միայն այս տեղ մի քանի ազնիւ երիտասարդք, որ ձրի աշխատում են—ի հարկէ ժամանակաւոր և անհիմն կերպով. և ազգային յառաջադիմութիւնը դրած է շատ խախտ հիմքերի վերայ. Ամենայն բարի գործ, որ պիտի յառաջանայ այս տեղ, հանդիպումէ մեծամեծ զժուարութիւնների, երկաթի գլուխ և աղամանակայ լեզու է հարկաւոր, որ այս տեղ որևիցէ յառաջադիմութեան գործ յաջողութիւն գտանէ. Հայերը փոխանակ թեթեւացնելու իւրեանց գործը, ինքեանք իւրեանց շատախօսութեամբ և հակառակասիրութեամբ անվերջ զժուարացնումն զայդ:

Եւ այժմ տպումն Թիֆլիզում մի «գործնական առաջնորդ ուսումնասիրութեան և ուս լեզուի յօգուտ Հայկազեան մանուկների» Практическое руководство къ изученію русскаго языка, որ մի շատ դժուարին գործ է, չլինելով այս տեղ ոչ օրինաւոր տպարան

և ոչ օրինաւոր գրաչարք. արի դու այս տեղ, զորձ կատարէ, Բայց ինձ քաղցր է մտածել, որ ես չէի հրաժարուելու Թիֆլիզից, առանց թողնելու այս տեղ մի քանի խօսուն յիշատակարանք և հետք իմ կեանքիս Թիֆլիզեան Հայերի մէջ, ուր և լինի մարդս, պարտական է գործել, չինել, տնկել, սերմանել և ինձ մի բնական հարկաւորութիւն է այդ, առես թէ կեանքի պայմանս Թիֆլիզ գործող շատ պիտանի կը լինի Հայերին և առաջին գործն է իւր տեսակումս:

Ձեր նամակը անցեալ ամսի 21-ից հանդերձ 7 մանէթի և 7900 ման. փոխանակազրի ծրարով ստացած եմ, որոյ մասին արդէն և տեղեկութիւն տուեցի Ձեզ նախընթաց նամակիս մէջ:

Իմ ամուսինս և զաւակներս մեծարողապէս ողջունումեն Ձեզ:

Մաղթելով Ձեզ ամենայն հոգեւոր և մարմնաւոր բարիք,

Մնամ Ձեզ առ ի սրտէ

յարգող և սիրող բարեկամ

Ս. Նազարեանց.

34.

Թիֆլիզ, 14 յունուարի 1871.

Եղբայրապատիւ բարեկամ իմ

Մելքոն Փանեանց,

Ձեր սիրելի նամակը անցեալ տարու դեկտեմբերի 10-ից և շնորհաւորական բարեմաղթութիւնը հեռագրով իւր ժամանակին հասած են ինձ. խնդրեմ ընդունել իմ առ ի սրտէ շնորհակալութիւնը և նոյնը մատուցանել իմ անունով մեր հասարակաց բարեկամին, Սմբատ Սիմէօնեան Շահագիրին:

Հին տարին բոլորեց իւր չրջանը և սկսաւ նոր տարին. մի տարի ես թաւ ու գնաց մեր կեանքից, առաւել մօտեցնելով զմեզ գերեզմանի դրանը. երիտասարդները նայումեն դէպ ի յառաջ, ունելով իւրեանց աչքի հանդէպ մի երկար ապագայ, իսկ ծերերը նայումեն դէպ ի յիտ, իւրեանց անցած գնացած օրերի վերայ, մտածելով անցեալը և կարճատեւ ապագան, որ տակաւին մնումէր նոցա: Ձեր անցեալը տասն տարով կարճ է քան թէ իմս, որ աւելի մօտ կանդնած եմ մահուն: Թէի այս այսպէս է, ըստ որում, ով որ շատ ապրած էր, նա չունի ոչինչ բան իւր առաջև, բայց ի մահուց. առկայն թե՛ չմեռաննք մեք մեռանելուց յառաջ, որչափ և կարճատեւ էր մեր ապագան, իմս մանաւանդ, այլ յուսանք թէ և կարճատեւ յուսով և այդպէս երկարացնենք մեր կեանքի օրերը, և այսպէս խորհրդով, որ արժանապէս լցուցանենք այն օրավաստակը, որ տակաւին մնումէր մեզ, մեծ կամ փոքրիկ:

Ինչպէս երևումէ թէ Ձեր և թէ պ. Դեղեանովի նամակից, իմ

դէպ ի Մոսկուա տեղափոխութեանս դրական, այսինքն այս բոլորիս պարզ և ուրու պայմանն է 1200 ուսուցիչ թույլ և միայն, առանց որ և իցէ հաւաստութեան, թէ երբ, կամ արդեօք երբ և իցէ իրագործուելու էին այն գեղեցիկ խոստմունքը, որ պ. մինիստրը արած էր— իմ կարծիքով, որպէս այդպիսի մարդիկ միշտ սովոր են, իւրեանց անձը փառաւորելու և սիրելի կաղուցանելու, մանաւանդ առաջին անգամը հանդիպելով իւրեանց ստորադրեալներին: Ես այսպէս չկամիմ խաբել ինձ յուսով թէ, ինչպէս վաղուց գրած էր պ. Քանանովը, իսկ այժմ գրում է պ. Դելեանովը, թէ ապագայումը, իցէ թէ հեռակայ ապագայումը աւելի բարեբերելու էին իմ պաշտօնի պայմանքը. ուրեմն թէ այսօր և թէ գալուցում չէ յուսալի աւելի արգասիք իմ պրօֆեսսորական պաշտօնից քան թէ 1200 մ. որ միտ դնելով աշխատութեանը 16 ժամ շաբաթական դասատուութեան, շատ չնչին ուժիկ է, աւելի վաճար, քան թէ յառաջ, երբ ես այդքան ժամերի համար ստացած եմ 2200 ման. Լազարեանց ինստիտուտում: Որպիսի վնասակար և անմխիթար յեղափոխութիւն պայմաններ. աշխատութիւնը երկպառակ շատ, վարձատրութիւնը երկպառակ սակաւ:

Բայ ի սորանից իմ տեղափոխութեանս ծախքը լինելու են գոնեայ 1000 ման. և Մոսկվայում պիտոյ կը լինի ինձ դարձեալ բաւական մեծ արծաթ չոր ի նորոյ կարգադրելու իմ անտեսութիւնս այդ տեղ, բնակութիւն, կարասիք և այլն և այլն, ասել է, ես յառաջուց պիտի մի 1500 մանէթ ծախիէ, որ պիտոյ մի տարու միջոցում ատանայի 1200 ման. և այն իմ ապրուստիս համար և ոչ թէ պարտք վճարելու: Դուք մատնացոյց էք առնում ինձ իմ այն փորձիկ կապիտալը, որ իբրեւ պաշար ես յանձնած եմ Զեզ հաճեցնելու իմ որդիներին համար և դժբա արդէն թուով չորք են. և ինչ հաշիւ էր, ամենայն ժամանակ ձեռնամուխ լինել այդ կապիտալին, մանաւանդ որ իմ տարիներում և իմ փոքրաբանակ վաստակով, անյուսալի էր վերստին լցուցանել հազարներով կերածը կապիտալի գլխից: Ի՞նչ և միւսերը խօսուածիս նոյնպէս իմ պանսիօնի¹⁾ վերայ, որ իբրեւ թէ մի այնպիսի մեծ նպաստ էր ինձ, որ ես կարող էի դորանով սարերի դուխ վեր ելանել: Թիֆլիզում շատ թանկ է վեանքը, բայց և Մոսկուայում ամենեին անհնարին է ինձ ապրել 1200 ման. յաւելացրու դորա վերայ և իմ պանսիօնս 784 մ. ուրեմն ընդամենը 1984 ման. իսկ յետոյ հաշուիր մօտաւորաբար, որ մի 600 ման. եթէ ոչ աւելի, պիտոյ է ինձ տալ բնակութեան, եթէ առ լինելու էր փոքր ի շատէ մօքուր և յարմարաւոր, յետոյ փայտ, ծառաների վարձ—որ այդ տեղ արդարեւ աւելի արժան են քան թէ

1) Պանսիօն ասելով պիտի հասկանալ պենսիա, կենդանոջակի Ե. Տ. Յ.

Թիֆլիզում—հազիւ թէ մնալու էին ինձ 1000 ման. ապրուստ, բայց, ինչպէս Դուք մտածումէք, անկարելի է ինձ այսուհետեւ ձեռնամուխ լինել իմ արձաթագլխի տոկոսիքին։ Որովհետեւ դժբա պիտի մնան իբրեւ պաշար իմ որբիկներին։

Ես այս բաներս գրումեմ Ձեզ, որ հասկացնեմ իմ այժմեան կացութեան անմխիթար և դժուարին պայմանքը։ Մի մեծ սխալ դործեցի ես գալով Թիֆլիզ, և դորա պատճառն էր իմ հայրենասիրական հոգու տրամադրութիւնը, որոյ փոխանակ ի հարկէ ոչ ոք չնորհակալ չէ ինձ. դուրս է գալիս, որ մեր անբարոյական Հայերի մէջ դա մի յանցանք է, մի յիմարութիւն, մի նախատելի և արհամարհելի բան. մի սխալանք, որ ինչպէս տեսնուածք Դուք, այսուհետեւ չատ դժուար էր ուղղել, առանց ենթարկուելու մեծամեծ վնասներին—մանաւանդ մի ընտանիքի հօր։

Սոսք չկայ, որ իմ վերստին տեղափոխութիւնն գէպի Մոսկուա պիտի պատրաստէ ինձ և իմ գերդաստանիս հանգիստ և խաղաղութիւն, բայց և կարօտութիւնք չատ, միտ ղենելով այժմեան փոփոխուած հանգամանքին։ Այլ և արքունի ծառայութիւնը, թէև սակաւաշահ, աւելի ապահով է և պատուաւոր, ապագայումը յաւելացնելու է իմ պանսիօնի վերայ մի քանի հարիւր ման. դոր օրինակ ղինի 10 տարու, 320 ման. յաւելացրու դորա վերայ միւս յարգելի յարմարութիւնքը Մոսկուայի կեանքի, տուն, ծառայք, ժողովուրդը և այլ տնտեսական պիտոյքը և բոլորեցուն պսակը—աղնիւ բարեկամներ և իմ հոգեհարազատ Փանեանքը.—ի հարկէ այսքան մեծադին բարիք բոլորովին արժանի էին այն մեծ տառապանքին և ծանրութեանը, որ պիտոյ էր յանձն առնուլ, վասն տեղափոխուելու Թիֆլիզից դէպի Մոսկուա։

Մնումէ մեզ միայն մի հարկաւոր հոգալի բան. այն է, որ Դուք և ես համոզենք ինտրիտուտի մեծաւորքը գոնեայ մի 600 մանէթի ճանապարհ ծախք վճարեն ինձ, միտ ղենելով իմ աղքատութեանը, որով ըստ իմիք պիտի թնթեկացնէին իմ ուսերի վերայ դրած ահապին բեռան ծանրութիւնը։

Իմ ամուսինը և զաւակներս ուղարկումեն Ձեզ չատ բարեմաղթական ողջոյններ առ նոր տարին և ցանկանումեն օր մի յառաջ գրկախառնել զՁեզ։

Ձեր

զՁեզ սիրող և յարգող

Ա. Նազարեանց

Այս նամակից յետոյ իր պատասխանեմ և պ. Դեկանուզին, որոյ հետ կարող էք և Դուք խօսել և յորդորել զնա դէպի վեհանձն օւշադրութիւն իմ ղրութեանս։

35.

Թիֆլիս, 2 փետր. 1871.

Իմ ազնիւ բարեկամ և սիրելի

Մելքոն Գասպարեան,

Ձեր ուրախարեք նամակը անցեալ ամսու 21 թուականից հասած է ինձ. դորա մէջ գանգատում էք իմ երկարատե լուծեան վերայ. արդարեւ մեղապարտ եմ Ձեր առաջ, մի քանի շաբաթ յետ ձեզիով Ձեր առաջնավերջին նամակի պատասխանը, բայց հաւաստի եմ որ այժմ ստացած լինէք զայդ և տեղեկացած իմ որպիսութեանս:

Ինչպէս գրած եմ Ձեզ արդէն, ես պարոն Դեկանովի առիտ գրած նամակին այնպէս պատասխանեցի, որ արդէն վճռած է իմ տեղափոխութեան խնդիրը. նորա յուսաւորութեանը հանդիպեցայ նոյնպէս յուսաւորութեամբ, հաստատելով և կնքելով գործը, համեմատ իմ գրածներին առ Քանանեանցը. Որովհետեւ ինձ առաջարկած առաջին պայմանքը իմ տեղափոխութեան էին 1200 ման, մի անտրոշ յուսաւորութեամբ թէ կարող էին դէպ ի աւելի լաւը փոխուիլ գոքա, վասն որոյ ես յանձն առնելով տոյճ անշահաւէտ պայմանքը, խնդրում էի, որ Ինստիտուտի մեծաւորքը միտ զնելով իմ հեռաւոր ճանապարհի, այլ և իմ նորոգ անակարգութեան ծանր ծախքերին Մոսկուայի մէջ, գտնեայ չնորհէին ինձ չափաւոր արծաթը 600 մանէթի Բայց որովհետեւ այժմ լսում ես, որ պրոֆեսսորութեան պաշտօնի պայմանքը փոխուած են դէպ ի շահաւէտը, այսինքն մինիստերութիւնից հաստատուած է (կամ թէ պիտի շուտով հաստատուի) 3000 ման. ոտնիկ կազարեան Ինստիտուտի պրոֆեսսորին, ես կարծում եմ, որ այսուհետեւ պիտի դժուարանար Ինստիտուտի կառավարիչը վճարել ինձ ճանապարհի կամ այդ հարկաւոր պիտոյքի ծախք, որ պիտոյ է յառաջուց լինէին իմ կողմից, ուրեմն և աւելորդ չէին իսկ Ինստիտուտը կարող է այսպէս տեք սանել խնդիրը, թէ իմ ներկայումս արած ծախքի փոխարէնը կատանայի պաշտօնի գալոց շահաւէտութիւնից. Չգիտեմ, ինչպէս կը վերջանայ այս խնդիրը. թէպէտ և դոցա անյաջող վճիռն ես կարող չէր արգելադրի լինել իմ տեղափոխութեանս, որ արդէն վճռած ու կնքած եմ ես Դեկանովի հետ, գրելով նմա, «До радостной встрѣчи въ Москвѣ»:

Ոչ մինչեւ այնպէս կարեոր խնդիր չէր այդպիսի շահաւէտ կարգադրութիւնը իմ ապագայ պաշտօնիս պայմաններին, որպէս ինձ ծանրաբեռնածիս բազմաթիւ տակաւին անդատարարակ, անչափահաս մանուկներով ևս մեծ հոգսի մէջ էի. մնալ և մեռանել ինձ խաւար Թիֆլիզում, չարշարուել, անօգուտ, անմիտ մարդերի

իշխանութեան տակ, քաղցր չէր. և այս պատճառով ի հարկէ նախապատիւ համարելի թէ և անշահաւէտ պայմաններով տեղափոխուելի դէպ ի Մոսկուա, փոքր ինչ խաղաղութիւն կեանքի վայելելու համար. իսկ մնաց որ, ինչպէս վկայումէ իմ սիրտս, ես աւելի կարող էի պիտանի լինել մեր Հայերին Մոսկուայից, քան թէ նոյն իսկ Թիֆլիզի մէջ, մօտաւորութեամբ նոցա, ուր մարդու ձեռք ու ոտք կապած ու կաշկանդած են։ Խնդիր է միայն այսքանս, արդեօք հաճոյ էր մեր Հայերին, որ մի մարդ, աշխատածէր մարդ, բարեմտութեամբ ու հայրենասիրութեամբ ոգևորուած պիտանի լինէր մեր Հայերին, այս մասին ևս մեծ տարակուսանք ունիմ և ակնատեսս փորձերով ուսած, պիտի ասեմ սրտի ցառով, որ բանը այն տեղ է հասած, որ մեր Հայերը ոչ իւրեանց հիւանդութեանը և ոչ դորա դեպ ու դարմանին են դիմանում։ Եւ թշնամին արդէն առիւծի պէս բացած կոկորդը, կամի կլանել զնոսա, բայց Հայերի առաջին թըշնամին ինքեանք են. ո՛հ, որպիսի և որքան վատթար մարդիկ վաւկումէ իւր մէջ Թիֆլիսը, և այս բանս այնքան ևս զգալի էր մի մարդու, որչափ նա աւելի պարզ ու ազնուամիտ էր։ Մոսկուան դրախտ չէ, բայց Թիֆլիզը մի դժուր է։ Ժողովրդի թշուառութիւնը և աղքատութիւնը մի ողորմելի տեսարան, որում կարող չէ տանել ոչինչ ցաւակից սիրտ. եւ որ մինին օգնես արծաթով և տուրքով, դոցա թիւը լէզիօն է։ Շատ բան ունէի Ձեզ պատմելու, բայց տեղ չկայ այս նամակիս մէջ։ Մեր Հոգաբարձուք զարմացած են իմ ողորմասրտութեան վերայ, որովհետև ինչ որ ինքեանք կարող չէին առնել, առնում է նոցա աղքատ տեսուչը։

Իմ ուսական լեզուի քերականութիւնը տպւումէ, բայց թէ որպիսի դժուարութեամբ, անասելի է։ Թիֆլիզում ոչ տպարան կայ և ոչ գրաշար. պատահեցաւ մի ծանր, բազմամասնեայ դործ կատարելու, արդէն ոչ տպարանը ունի հարկաւոր պատրաստութիւնքը և ոչ գրաշարը կարող է գործ կատարել. բոլորը տգէտ մարդիկ են։ 10 անգամ պիտի սրբազրել մի թերթ, որ բան յառաջանայ։ Սարժափելի դրութիւն։ Բայց ինչ հարկաւոր են մեր Հայերին գրեանք. զպրօքը և աշակերտք և ժողովուրդը պիտի անգիր ուսանին ամենայն բան և գիտութիւն։ Գրեանք հարկաւոր չեն։

Իմ եղբայր Մարտիրոսը այժմուս Թիֆլիզում է. իւր բոլոր ապրանքը, որ բերած էր Բաքուից և Սալիանից վաճառած է. բայց զեռ գումարը, ինչպէս երևում է, լիովին հասած չէ ձեռքը վերստին։ Ես հոգաբարձու կը լինեմ, որ նա չուտով առ Ձեզ պարտավճար գտանուի։

Ես փոքր ինչ հիւանդ եմ օթեանիս անպիտանութեան պատճառով, այս պարոն Աւետիք Էնֆիաջեանցը մի շատ խաբեքայ և անպիտան մարդ է. խաբեց ինձ և չարաշար խաբեց տալով ինձ

անտանելի սառն բնակութիւն և յառաջուց քերթելով ինձանից տարեկան վարձը 400 ման, և հազար անգամ՝ ասած նմա, թէ քո հնոցքը անպիտան են, ծխոտ են, տաքութիւն չունին. նա անհոգ ու անփոյթ է։ Այսպիսի խաբեբայ, անխիղճ մարդիկ ես տեսած չեմ, որպիսի տեսանումեմ թիֆլիզում, ամենասակաւ բացառութեամբ։

Եւ թիֆլիզի փորձը առանք. ճոխացանք գիտութեամբ, որ տակաւին պակաս էին ինձ։ Տեսանք մեր չտեսածները և արդարեւ իմաստնացանք, միայն թէ ծանրածանր զրկանքներով և զոհելով կեանքի խաղաղութիւնը։ Մեք մտանք ծովի մէջ, միւսերը կանգնած էին ի սկզբանէ և են այժմ իսկ ծովի ափումը. մեք գիտենք կեանքի փոթորիկները. միայն թէ գիտենք, բայց միւսերին օգնել կարող չենք, և այդպէս, ինչպէս երեւում է, պիտի մեռանինք։

Ընդունիր սիրալից ողջոյնը և յարգութիւնը իմ գերդաստանի, որ օր մի յառաջ ցանկանում էր գրկախառնել զձեզ, և ողջ եղիր վասն

Քո զՔեզ սիրող և յարգող բարեկամի
Ս. Նազարեանց.



Հ Ե Ր Ո Վ Դ Ի Ա Դ Ա *)

(Գուստաւ Փլօքերի)

II.

Ժողովուրդը բռնել էր ամբողջի պարիսպները, երբ Բիթելիոսը մտաւ բակը։ Նա յենուել էր թարգմանի ձեռքին. նրա յետևից բերում էին մեծ, գեղեցիկ պատգարակ, զարդարուած հայելիներով ու փետուրներով, Բիթելիոսի վերայ կար սենատորի թիկնոցը, հագել էր կոնսուլի կօշիկները. ծառաները շրջապատել էին նորան։

Նոքա դռների առաջ ցցել էին իրենց տառներկու կապ ճիւղոտները, կապոտած թոկերով, իսկ ճիւղոտների մէջ տեղում դրած էր կացին. ամենքին երկիւղը պատեց տեսնելով հոովմէական ժողովրդի մեծութեան այս նշանները։

Պատգարակը, որ տանում էին ութն մարդ, կանգնեց։ Նրանից իջաւ մի պատանի մեծ փորով, կարմիր բշտիկներով ծածկուած երեսով և մարգարտեայ մատանիներ շարած մատների վերայ։ Նրան տուին մի դաւաթ գինի և քաղցր խմորեղէն։ Նա ցամաքեցրեց այն և պահանջեց երկրորդը։

*) Տես սոյն Թիւ օգոստոսի համարը։